Հաստատում եմ
Նաիրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ
_____ Կ. Հարությունյան
<<16>> օգոստոս 2024թ.

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N4

<<ԿՄՆՀ-ՀԲՄԱՇՁԲ-24/3>>

1. Պատվիրատուի անվանումը, գտնվելու վայրը. Նաիրիի համայնքապետարան, Հայաստանի Հանրապետություն, ք. Եղվարդ, Երևանյան 1:

2. Գնման անհրաժեշտությունը և գնման ձևի ընտրության հիմնավորումը. Գնման առարկա է հանդիսանում Նաիրի համայնքի Զովունի բնակավայրի կարիքների համար փողոցների ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերումը: Գնման գործընթացն իրականացվել է <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի համաձայն:

3. Հրավերը և դրանում կատարված փոփոխությունները. <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 06-ի թիվ 386-Ն որոշմամբ հաստատված <<Էլեկտրոնային ձևով գնումների կատարման>> կարգի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան կազմվել է հրավեր, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2024 թվականի հուլիսի 4-ին կայացած նիստում: Հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

4. Գնման վերաբերյալ ստացված հարցումները և ներկայացված պարզաբանումները. Գնման վերաբերյալ հարցումներ չեն ստացվել, պարզաբանումներ չեն ներկայացվել:

5. Հայտ ներկայացրած մասնակցի տվյալները՝ անվանումը, գտնվելու կամ բնակության վայրը, կապի միջոցները.
<<ԿՄՆՀ-ՀԲՄԱՇՁԲ-24/3>> ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացվել է թվով երեք հայտ՝

Հ/հ	Հայտ ներկայացրած մասնակցի		
	անվանումը	էլեկտրոնային փոստի հասցեն	Տ/Փ-ի ստացականի հ/հ
1	<<ԵՎՐՈԲՈՒԴ ՊԼՅՈՒՍ>> ՍՊԸ	eurobudplus@gmail.com	000245685
2	<<ՊՐԵՏՈՐ>> ՍՊԸ	pretorllc@gmail.com	000245694
3	<<Լիլիթ-87>> ՍՊԸ	Lilit87_95@rambler.ru	000245693

6. Հայտով ներկայացված գները.

Հ/հ	Մասնակցի անվանումը	Մասնակցի կողմից առաջարկված գնային առաջարկը (ՀՀ դրամ), ընդ որում		
		Արժեք(ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
Չափաբաժին 1				
1	<<ԵՎՐՈԲՈՒԴ ՊԼՅՈՒՍ>> ՍՊԸ	223 518 437	44 703 687	268 222 124
2	<<ՊՐԵՏՈՐ>> ՍՊԸ	323 750 000	64 750 000	388 500 000
3	<<Լիլիթ-87>> ՍՊԸ	240 000 000	48 000 000	288 000 000

7. Հայտերի գնահատման կարգը և դրանց գնահատման արդյունքները. Հայտերը գնահատվել են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության և հրավերով սահմանված կարգով, և գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2024 թվականի հուլիսի 16-ի թիվ 3 որոշմամբ ընտրված մասնակից է ճանաչվել.

-N 1 չափաբաժնի մասով <<ԵՎՐՈԲՈՒԴ ՊԼՅՈՒՍ>> ՍՊԸ –ն:

8. Հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը. <<ԿՄՆՀ-ՀԲՄԱՇՁԲ-24/3>> ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հայտեր չեն մերժվել:

9. Պայմանագիրը, իսկ գնման գործընթացի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում՝ դրա հիմնավորումը.

Չափաբաժին 1

2024 թվականի օգոստոսի 15-ին Պատվիրատու՝ Նաիրիի համայնքապետարանի, որը գտնվում է ք. Եղվարդ, Երևանյան 1 հասցեում, և Կապալառու՝ <<ԵՎՐՈԲՈՒԴ ՊԼՅՈՒՍ>> ՍՊԸ -ի, որը գտնվում է ք. Երևան, Արտաշատի խճուղի 15/1 հասցեում, միջև կնքվել է Նաիրի համայնքի Զովունի բնակավայրի փողոցների ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերման գնման պայմանագիր N <<ԿՄՆՀ-ՀԲՄԱՇՁԲ-24/3>>:

Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 268 222 124 (երկու հարյուր վաթսունութ միլիոն երկու հարյուր քսաներկու հազար հարյուր քսանչորս) ՀՀ դրամ:

10. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագիրը. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

11. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքները և դրանց վերաբերյալ կայացված որոշումները. Գնման գործընթացի վերաբերյալ բողոքներ չեն ներկայացվել:

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Վ. Վիրաբյան

(Կազմվել է <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի համաձայն)